

## **Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվության բաժնում փորձագետ ներգրավելու մասին**

### **Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝**

1. պարբերաբար իրականացնում է Client-TREASURY ծրագրային համակարգով կատարված էլեկտրոնային վճարային գործարքների վերաբերյալ արտահանված տեղեկատվության հաշվարկային (կատարողական) փաստաթղթերի հաշվեգրված տվյալների հետ համադրման, ճշտության ու համապատասխանության ստուգման աշխատանքներ,
2. իրականացնում է հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) կատարված գործառնությունների ուսումնասիրություններ և անճշտությունների բացահայտումներ,
3. ընտրանքային կարգով իրականացնում է հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) հաշվառված հիմնական միջոցների փաստացի առկայության, գտնվելու վայրի ստուգման և ուսումնասիրման աշխատանքներ:

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** պայմանագիր կնքելու օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը

### **Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

- 1) Հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտությամբ բաժրագույն կրթություն,
- 2) Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ,
- 3) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
- 4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

### **Փորձագետի պարտականությունները՝**

Բարեխղճորեն կատարել պայմանագրով ստանձնած աշխատանքները, պահպանել աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները, իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ը**  
ներառյալ:

Չի թույլատրվում պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

**Ընտրություն կատարելու եղանակը՝** դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները **g.grigoryan@minurban.am** էլեկտրոնային փոստին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմում (ձևանմուշը կցվում է),
- 2) անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենները,
- 3) կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- 4) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- 6) մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,
- 7) համառոտ CV:

Աշխատանքի վայրը՝ Քաղաքաշինության կոմիտե /ք.Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարական տուն 3/:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ հեռ. 011 621 768:

